

# ԴՈՒ ԵՍ ԻՄ ՀԵՐՈՍԸ, ՊԱ՛Պ...

Կան մտածված, բայց չստացած խոսքեր, կան երազանք դարձած ակնթարթներ, կան հուշ-օրեր, որում ապրում ես դու՛ իմ հերոս:

Եթե կարողանայի ցավս փոխել հպարտության, արցունքներս ժպիտի, ափսոսանքս՝ սիրո, գուցե այդ ժամ այլ աչքերով նայեի կյանքին:

Երանի երբեք չլինեն բաժանումներ, չլինեն սպասումներ. երանի ոչինչ կիսատ չմնա, երանի հնար լինեի կորցրածը գտնելու, երանի այսօրս և ամեն օրս սկսվեր ու ավարտվեր Քեզ հետ, երանի այսքան չզգայի կարիքդ:

Մանկությունս եմ ուզում, Տե՛ր, անցած օրերն այն անցավ, երբ ծնկներս էին արյունոտ, երբ վերքերս բաց էին, երբ մի խոսքը կամ համբույրը դեղ էր, երբ սրտիս վրա չկար այդ նույն բաց վերքից, որի բուժումն դու ունեիր, պա՛պ, այն ժամերն եմ ուզում, երբ քո ժպիտը իսկական էր, երբ դու կողքիս էիր... Ես իմ մանուկ օրերն եմ ուզում, երբ վազելով բարձրանում էի աստիճաններով, շտապում բացել դուռը, տեսնել Քեզ: Չկա այն մեկը, ով կլրացնի քո բացը, որովհետև Քեզ հետ աշխարհի տերն էի, ապահով, ուժեղ, վստահ ու համարձակ էի, իսկ այսօր լեզուս պապանձվում է, փոխարենը հոգիս է ծչում ցավից, որովհետև մարմնիս ողջ բջիջներով զգում եմ Քեզ այնքան մոտ, որքան հեռու ես: Երազում եմ գլուխս



հենել ուսիդ, երազում եմ սպասումս արդարացվի, երազում եմ կարոտս մեղմանա, երազում եմ չզժվել ու չմեռնել կարոտից, երազում եմ այդ անտեր կարոտախտը կյանքիս մասնիկը չլինի, բայց և շարունակ կարոտում եմ, կարոտում ծածուկ ու թաքուն աշխարհից

և մարդկանցից:

Ու կարծես ոչինչ չփոխվեց, բայց ամեն բան դարձավ այլ, ապրելով ներկայում՝ անցյալի պես խաղաղ ապագա ենք փնտրում:

Գլորվող օրերի ոչ մի վայրկյան չեմ դադարում աղոթել Քո հոգու հանգստության համար, չեմ դադարում հավատալ, որ կողքիս ես: Ես էլ Քեզ պես մի հայրենասեր եմ, բայց ես ատում եմ պատերազմը, իսկ հաղթանակը դարձրել եմ կյանքիս կարգախոսը, կամ էլ ուղղակի երազելու տեսակ:

Ծնվում եմք, որ ի՞նչ, որ տառապե՞մք, թե՞ որ հրաժեշտ տանք մեզ կյանք տվողին: Ախր ես իմ սրտի ամենախորքում անգամ չունեի թաքցրած ոչ մի գրամ ուժ, որով կարող էի հաղթահարել այս ամենը, բայց գտա... հենց այդ ուժն է, որ ինձ ստիպեց ապրել իմ ու քո փոխարեն:

Ես չունեմ այն բառերը, որ կարող եմ երբևէ արտահայտել իմ ապրումներն ու զգացմունքները, պապ, դու ես իմ հերոսը, միշտ ներկա, բայց անհասանելի... Դու չհասցրեցիր իմ նվիրական երազանքը ի կատար ածել, դու բոլոր հայրերի նման՝ արցունքախառն աչքերով ու դողացող ձեռքերով իմ ձեռքն ուրիշին հանձնել չհասցրեցիր, ինձ չտվեցիր հայրական օրհնանք, ճակատս չհամբուրեցիր, պա՛պ, խորասույզ հայացքով չնայեցիր ինձ՝ մի վերջին անգամ... ամեն տեսակ բաժանում պատկերացրել եմ, բայց ոչ երբեք այսպես, որովհետև Քեզ տիեզերական սիրով եմ սիրում, որովհետև բոլոր ժամանակների իմ հերոսն ես, պա՛պ... Երկնային արքայություն Քեզ, իմ խիզախ հայրիկ, իմ լուռ և արցունքոտ գիշերների միակ վկա...



**Իլոնա ԲԱՂԱՍԱՐՅԱՆ,**  
Լրագրություն, 4-րդ կուրս



# Ին ժամանակը

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

## ԴՈՒ ՀԵՐՈՍ ԵՍ, ԱՐՑԱ՛Ն

«Ամեն բան հարաբերական է տիեզերքում, բացառությամբ այն սերը, որ ես ունեմ քո նկատմամբ»: Կուզեմայի հուշիկ Արայի հենց այս տողերով սկսել, որովհետև քո համոզեց ունեցած իմ սերը սահմաններ չունի: Ես սիրում եմ քո խիզախ ու չընկրկող տեսակը:

Աշխարհում չկա, չի էլ լինի, որևէ երևույթ, երկիր, մարդ, կամ մեկ այլ բան, որ կարող է տանել այն սուսակի ցավն ու դավը, որոնք դու ես տեսել. տեսել ես, բայց միշտ էլ վերջին ուժերով, թեկուզ մեծ դժվարությամբ, բռունցքվել ու վերակենդանացել ես՝ աշխարհին ապացուցելով, որ՝ «Այնտեղ է լուր սխրանքն սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»:

Դու հերոս ես, Արցախ, դու իմ հերոսն ես: Փոքրիկ դրախտավայր ես, ում չորս կողմից ամենքը դեպի իրեն է ձգում. չեմ էլ հասկանում,



որ դու միայն մերն ես, մեր մայրն ես, մեզ ծնող, սնող ու մեծացնողն ես, և իհարկե՛ «Դու նա ես, ում խաղաղության համար զոհվում են առանց կասկածելու», որովհետև եթե չլինես դու, չի լինի մեր սերը, հավատը, կամքը: Ի՛մ հերոս, թող խաղաղությունը մի՛շտ զորացնի թևերդ:

**Անահիտ ԱՅԴԻՆՅԱՆ,**  
Լրագրություն, 4-րդ կուրս

## ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Է



**Հայրենիք-Սրբություն**  
Արցախի համար ծանր ժամանակներ են: Անորոշ է նույնիսկ հաջորդ վայրկյանը: Չնայած առկա անվտանգային, սոցիալական խնդիրներին, հազարավոր արցախցի-

ներ հողի կանչին ականջալուր ու հնազանդ ապրում են մի բուռ դարձած հայրենիքում: Գուցե հողը համարվում է անկենդան բնության մասնիկ, բայց մեր հողն անկենդան լինել չի կարող: Այն ջրված է անօրինակ սխրանքներ գործած այն անսահման սիրող քաջորդիների մատուցմամբ, չիրականացած երազանքները:

Բազում են եղել փորձությունները հայի անցած պատմական ուղում: Հայ ժողովուրդը վերելքներ ու վայրէջքներ է ունեցել, սակայն չի ծնկել, չի վիստվել, այլ պայքարել է ու հաղթել: Մեզ պատուհասած ու պարտադրված պատերազմից մի քանի տարի է անցել, բայց ազգի սրտի վերքը չի սպիացել ու անընդհատ հիշեց-

նում է այն սարսափելի, անմարդկային ոճրագործությունները, որոնք կատարվել են 44 օր շարունակ մեր եղբայրների, հայրերի նկատմամբ ու անամոթաբար հրապարակվել:

Այսօր ծովից ծով Հայաստանից մնացած փոքրիկ, բայց սուր սեպ ենք խրված թշնամու կոկորդում, ու միայն ազգի շահը վեր դասելով, ճիշտ դիվանագիտական քայլերով, հայրենասիրությամբ կարող ենք սանձահարել հակառակորդի լայն ախորժակը:

Արցախցիներիս համար «Ի՞նչ է հայրենիքը» հարցին կա մեկ պատասխան, որը ապացուցում չի պահանջում, և այդ պատասխանն է «Սրբություն»: Եվ ուրեմն, ամուր բռնեք մեր հավատն ու պայքարեք «Սրբության» ամբողջականացման, հզորացման, զարգացման ու լուսավոր ապագայում լինենք ազատ ու անկախ, ինչպես մեր օրհներգում, միասնական, մեջք մեջքի և ուս ուսի կանգնած նոր հաղթանակներ կռենք ու մեր ազգային ինքնությանը աշխարհին թելադրող օրինակ լինենք:

**Ռուզաննա ՍԱՀԱԿՅԱՆ,**  
Մաթեմատիկա, 4-րդ կուրս



**«Քո ժամանակը»**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Սպաքանակ՝ 400

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ

Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանգ, լրագրություն 3-րդ կուրս

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5: Հեռ.՝ (047) 94 04 91

# ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ԱՊԱԳԱՅԻ ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ



**ԱրՊՅ-ի ՈՒԽ-ի Պանելային քննարկումների ակումբի նախաձեռնությամբ սեպտեմբերի 22-ին կազմակերպվեց առաջին պանելային քննարկումը՝ «Ապագայի մեր տեսլականը» խորագրով:**

Որպես մոդերատոր հանդես եկավ ակումբի անդամ, ՈՒԽ նախագահ Արա Սարգսյանը, ով ելույթի խոսքում նշեց ակումբի բացման անհրաժեշտության, նպատակների մասին, այն է. առկա խնդիրներին նայել տարբեր մասնագետների տեսանկյունից, լսել նրանց տեսակետը, ուսանողներին հնարավորություն տալ հարցուպատասխանի միջոցով ինտեգրվել քննարկմանը, ստանալ հուզիչ հարցերի պատասխանը, ինչու չէ նաև տալ իրենց առաջարկություններով կիսվելու հնարավորություն:

Հանդիպմանը քննարկվեց. \*ԱՅ-ում և ՀՀ-ում ռազմական, կրթական ոլորտում առկա խնդիրները և լուծման տարբերակները, \*Սպասվող ներքին ու արտաքին մարտահրավերները,

\*ՀՀ-ի քաղաքականությունը միջազգային իրավական հարթակներում, \*Արցախի տնտեսության զարգացման տեսլականը,

\*SS ոլորտի զարգացման միտումները Արցախում, \*Արցախի ինքնորոշման իրացման հեռանկարը:

\*Արցախի ինքնորոշման իրացման հեռանկարը: **Քանասեր-մանկավարժ պանելիստ Մարգարյան Լուսինե.**

**Առաջարկ** -Կառավարությունը պետք է իրավական պետպատվեր ունենա, ստորաբաժանումների աշխատանքի դիտարկման մեխանիզմի գնահատում, յուրաքանչյուր անդամ պետք է ունենա պաշտոնի անձնագիր, միայն իր լիազորությունները չպետք է կարողանա կատարել, այլ նաև՝ ստորաբաժանումներում մնացած անդամների լիազորությունները նույնպես, որպեսզի անհրաժեշտության դեպքում նաև փոխարինի, ուսումնական պլանում փոփոխություններ:

\*«Ապագա ուսանող» էջ ստեղծել, որի միջոցով աշակերտները ուսանողական կյանքին հետևելու հնարավորություն կունենան:

\*Ոչ ֆորմալ և ֆորմալ կրթությունը համատեղելով կարող ենք արդյունքի հասնել՝ մանատիպ միջոցառումներ կազմակերպելով, ակումբներ հիմնելով:

**Ռազմագետ պանելիստ Այդինյան Շահեն.**

\*ՆՁՊ-ի և զին. կենսագործունեության առարկայի յուրացման

\*Ռազմահայրենասիրական դաստիարակության անհրաժեշտության մասին, որը, ինչպես և ընդգծեց, պետք է սկսել դպրոցից:

\*Դպրոցական դասագրքերում չպետք է պարտությունը վերագրվի որպես բարոյական հաղթանակ, պետք է նշվեն մեղավորները, խոսվեն սխալների մասին:

**Խնդիրներ** - Պրն Այդինյանը նշեց հետևյալ խնդիրները.

\*Ձորքի պատրաստվածությամբ զբաղվելու խնդիր

\*Ունենք առաջնագծի խնդիր, այսինքն՝ առաջնագծում են կրթված, պատրաստված սպաները:

**Առաջարկ**-Պետք է ստեղծվի բանակում մարտական պատրաստվածության ուսուցման գործընթաց:

Պատրաստել զինագործության խմբեր, ուր ներգրավված կլինեն նաև աղջիկները:

## 2 ↪ **Իրավաբան պանելիստ Ջաքարյան Սուսի.**

**Խնդիր**- իրականում 1989 թվականին առաջ էր քաշվել իրադարձությունների զարգացման մեկ ուղի՝ վերամիավորում Մայր Հայաստանի հետ: Սակայն ինչ-ինչ պատճառներով տեղի ունեցավ շեղում այս ճանապարհից և Արցախն ու Հայաստանը առանձին-առանձին հռչակեցին իրենց անկախությունները սեփական Սահմանադրություններով ու օրենսդրություններով հանդերձ:

**Առաջարկություն** -Այժմ պետք է կողմնորոշվել, թե ԱՀ վերջնականապես որն է, ճանաչում որպես անկախ պետություն, թե՞ Հայաստանի կազմում՝ որոշակի ինքնավարությամբ,

-մշակել միասնական ռազմավարություն՝ ապագայի տեսլականով,

-համագործակցել այն պետությունների հետ, որոնց հետ չի համագործակցում Ադրբեյջանը,

-և ընդհակառակը, խորացնել համագործակցությունը այն երկրների հետ, որոնց հետ հայ ժողովուրդը ունի պատմական կապեր և ընդհանուր շահ՝ Հունաստան, Ֆրանսիա, ՌԴ, ԱՄՆ, Իրան և այլն,

-ապահովել դեմոգրաֆիական աճ,

-առավել լիարժեքությամբ օգտագործել սփյուռքի ներուժը:

**Տնտեսագետ պանելիստ Թադևոսյան Միհրան.**

Քննարկման ընթացքում հնչած բոլոր խնդիրների լուծման հիմքում ընկած է տնտեսության զարգացման առաջնահերթության խնդիրը:

Ունենք տնտեսական աճ, բայց ոչ տնտեսության զարգացում,

2020թ. պատերազմից հետո ամենամեծ վնասը կրել է գյուղատնտեսությունը(կրկնակի կրճատում), իսկ զարգացնել շինարարությունը՝ բնակարանաշինության շնորհիվ ( ֆինանսավորումը ՀՀ-ից ու Հայաստանի համահայկական հիմնադրամից):

Երկիրը ունի զարգացման 4 քաղաքականություն.

- 1.Արտաքին անվտանգություն
- 2.Ներքին անվտանգություն
- 3.Դրամավարկային քաղաքականություն
- 4.Հարկաբյուջետային քաղաքականություն

Մեզ մոտ միայն առկա է ներքին անվտանգությունը և հարկաբյուջետային քաղաքականությունը:Վերջինս նպաստում է ՓՄՁ-ների զարգացմանը, սակայն եթե համեմատական կարգով



նայենք, ԱՀ-ում դեռևս մեծ բացթողումներ կան ոլորտում:

Արտաքին քաղաքականությունը ապահովվում է այլ երկրների կողմից, իսկ դրամավարկային քաղաքականությունը՝ ՀՀ-ի գոտում:

- Առաջարկ.**
- 1.ինտենսիվ գյուղատնտեսություն
  - 2.ապահովագրություն
  - 3.բարձրարժեք ապրանքների արտադրություն

ՓՄՁ-ն խթանել և դարձնել տնտեսության շարժիչ ուժը

ԱՀ սահմաններից դուրս բնակվողի ռեսուրսը տրամադրել նրանց, ովքեր պատրաստ են այստեղ ձեռնարկատիրական գործունեություն ծավալել:

**SS ոլորտ/ Պանելիստ Մնացականյան Արթուր.**

Ա.Մնացականյանը հանդես եկավ ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթությունը համատեղելու առաջարկով: Առաջարկեց ունենալ դասասեյնյակ, որտեղ կանցկացվեն պրակտիկ դասընթացներ ոչ միայն SS ոլորտի ուսանողների հետ, այլև նրանց հետ, ովքեր հետաքրքրված են այս ոլորտով:

Նշեց, որ պետք է հստակ պետական ռազմավարություն մշակել,համագործակցել IT կազմակերպությունների և մայր բուհի հետ:

**Խնդիր**-չտեղեկացվածություն, մասնագետների խնդիր կա ու նաև գրաֆիկների անհամապատասխանություն աշխատանքի համար:

**Պատմաբան պանելիստ Սարումյան Նունե.** Արցախը խաչմերուկ է գերտերությունների համար և խոչընդոտ՝ «Մեծ Թուրանի» համար: Խոսվեց ներկա իրավիճակում խելամիտ կողմնորոշման անհրաժեշտության մասին:

Առաջարկեց աղջիկներին ներգրավել զինագործության խմբակներում, նրանց ևս ռազմական պատրաստության մեջ ընդգրկել:

**ԱրՊՅ Ուսանողական խորհուրդ**